



8 (163). ԿՈՏԿԻՐԻՐԵՆ ՈՒ ԲԱԴ

Կոտկիրիբեն ու բադ կը հանպըտին չիրար:
Կոտկիրիբեն կըսե.

— Ես լե շրի մեջ կապրիմ, դու լե, ես ինչ օր կուտիմ, դու լե
զէն կուտիս, էլ չորի՞ն շառնինք զիրար, չը կարգըվինք:
Բադ կըսե.

— Կարգըվինք, կարգըվինք, խարուկ իմ, լե դու կոնա՞ս իմ պես
թոնաս վերև:

— Ձէ՛, վոլա, չըմ կոնա, դաթի իմ մարամն էլ է՛ն է, օր թոնամ
վերև, բան տեսնամ:

— Լ՛պա ի՞մալ էնինք:

— Արի,— կըսե կոտկիրիբեն,— ճիլ օլրինք, էնինք կեմի պես,
դոտներ մի կապինք չիրար, դու թո՛ի, զիս լե թոցու հըտ քըզի,
բանձրնանք վերև, օր ու արև տեսնամ:

Ճիլ կօլրին, զոտներ ուրանց կը կապին չիրար, բադ կը թոնա
ու զկոտկիրիբեն կը բանձրցու ուր հետ. փշու մե օր գելնան, փը՛րթ,
կեմ կը կտրի ու կոտկիրիբեն կալապուճկե, գլոր-մլոր վըր քարե-
րուն գընկնա, կէզնի հազար փշուր:

էնոքի մեծորեք ըսած ին.

Խազ՝ խազի հետ,

Բադ՝ բադի հետ,

Կնտուկ ճետ լե

Քոռ հավի հետ:

